ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№_____

«___» «_____» 2019թ.

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ՀԿ-ի նախագահ տիկին Շ. Դոյդոյանին
Երևան, Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ, էլ. փոստ՝ foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հունիսի 27-ի գրության հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարությունը չի տիրապետում Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման համար Կառավարության կողմից հայտարարված հանրային մրցույթի առաջարկի փաթեթի և հաղթող կազմակերպության հրապարակային հայտարարության մասին տեղեկատվությանը:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածում թվարկված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակները՝ ըստ կատեգորիաների: Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետում, 5-րդ մասի 4-րդ կետում, 6-րդ մասի 3-րդ կետում թվարկված են ջրային տնտեսության բնագավառի Ա, Բ, Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակները, որոնք օրենքով սահմանված կարգով ենթակա են գնահատման և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ ՇՄԱԳ-ն իրականացնում է ձեռնարկողը, համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջոցով: Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնում է լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը:

<<Վեոլիա ջուր>> ՓԲԸ-ի կողմից որևէ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվություն չի ներկայացվել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Հարգանքով՝

Պաշտոնակատար Վ. Ջիլավյան

X _____

ՏՀՀԿՎ,Հ.Պողոսայան՝ 011818517

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
10010608@e-citizen.am | min_ecology@mnp.am | www.mnp.am
(+374) 11 818-520 | Fax: (+374) 11 818-506